ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 11 հուլիսի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Պողոսյանի
Անդամակցությամբ՝ Ա. Պետրոսյանի
Մ. Թոփուզյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Կարեն Մեհրաբյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Կարեն Մեհրաբյանը 20.06.2013թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ քրեական օրենսգրքի 299 եւ 302-րդ հոդվածների, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 390, 393, 407, 414^1 եւ 414^2-րդ հոդվածների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության պահանջներին:

Անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքներից պարզվեց, որ դիմումի քննության ընդունումը ենթակա է մերժման՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

1. Դատական կազմը գտնում է, որ դիմումն ակնհայտ անհիմն է: Դիմողը չի ներկայացրել անհրաժեշտ եւ իրավական փաստարկներ վիճարկվող իրավադրույթների ենթադրյալ հակասահմանադրականությունը հիմնավորելու համար, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է, որ անհատական դիմումը պետք է պարունակի ՀՀ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-839 որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասի վերաբերյալ՝ ամրագրելով, որ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որեւէ հատկանիշով:

2. Դատական կազմը գտնում է նաեւ, որ դիմողը պատշաճ չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի եւ սահմանադրաիրավական վեճի առարկա հանդիսացող դրույթների միջեւ պատճառահետեւանքային կապի անմիջական առկայությունը, ինչն ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի եւ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-839 որոշման՝ անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

3. Միաժամանակ, դատական կազմը գտնում է, որ դիմողը, ձեւականորեն վիճարկելով վերոհիշյալ նորմերի սահմանադրականությունը, ըստ էության, բարձրացնում է այդ դրույթների կիրառման իրավաչափության հարց: Փաստորեն, դիմողը փորձել է դատական ակտերի իրավական հետեւանքները վերագրել խնդրո առարկա իրավադրույթների սահմանադրականության խնդրին: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2009թ. մարտի 17-ի ՍԴՀՈ-21 որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Յ.

Քաղաքացի Կարեն Մեհրաբյանի անհապական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

11 հուլիսի 2013 թվականի
ՍԴԴԿՈ /2-18